

ՊՈՂՈՍ ԳԵՎՈՐԳԻ ՓԼԱՎՉՅԱՆ

Ծնվել է 1980թ. փետրվարի 2-ին Երևանում:

1986-1996թթ. սովորել է Երևանի Հայրապետ Հայրապետյանի անվան թիվ 78 միջնակարգ դպրոցում:

1996-2001թթ. սովորել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում (ներկայումս՝ ՀՊՏՀ)՝ տնտեսագետ, Կառավարման ֆակուլտետի աշխատանքի էկոնոմիկա և սոցիոլոգիա մասնագիտությամբ:



2002-2005թթ. ընդունվել և ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիան՝ պետական ծառայողի, պետական կառավարում և տեղական ինքնակառավարում մասնագիտությամբ:

2009թ. պաշտպանել է թեզ «ՀՀ համայնքների ֆինանսական ինքնուրույնության ապահովման ուղիները» թեմայով և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2002-2005թթ. ընտրվել է Երևանի Արաբկիր համայնքի ավագանու անդամ:

2003թ.-ից անդամակցում է Հայաստանի ավագանիների ասոցիացիային, 2005թ.՝ խորհրդի անդամ:

2005-2008թթ. վերընտրվել է Երևանի Արաբկիր համայնքի ավագանու անդամ:

2006թ.-ից համայնքների ֆինանսիստների միության անդամ է:

2009թ.-ից «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ է:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր: